ՍԱՄՈՒԷԼ ՎԱՐԴԱՆԵԱՆ ՄԱՐԴԸ ԵՒ ՄԱՐՏԻԿԸ

«Ազատութիւն» ռադիոկայանը ադրբեջաներէն հաղորդման ժամանակ՝ վկայակոչելով Բաքուի իր թղթակցին, լուր տուեց, թէ իբր Սեպտեմբերի 13-14ին 2 հազար հայ «բոլշեւիկներ»ը զրահապատ մեքենաների աջակցութեամբ գրոհել են Բուզլուխ եւ Մանաշիդ գիւղերը: Երկօրեայ մարտերի ընթացքում սպանուել են 10 ՕՄՕՆական եւ չորս հայ:

Նոյն օրը մոսկովեան «Վեստի» ծրագրով մարտերի շրջանից ցուցադրուել է հեռուստահաղորդում (անշուշտ, ազերիների նկարահանածը) եւ մեկնաբանութիւն. «Հայերը բռնի տեղահանում են ազերիներին ադրբեջանական հողերից»: «Վեստի» ծրագիրն ասես մոռացել էր, թէ Նովոզարեւեան համաձայնագրից յետոյ ինչպէս էր ռուսական բանակը հէնց նոյն տարածքում շյայտարարուած պատերազմ էր մղում հայ բնակչութեան դէմ, ինչպէս էր ոչընչացնում ու բռնի տեղահանում հայերին: Սակայն ճշմարիտ լրատուութիւնն իսպառ խեղդելու փորձը չյաջողուեց. վկաներ շատ կային, դրանց մէջ՝ նաեւ արտասահմանցիներ ու ռուս ժողովրդավար պատգամաւորներ: Նոյնիսկ «Պրաւդա»ն ի վիճակի չեղաւ հերքելու հայերին բռնի տեղահանելու փաստը:

Սերունդների, մեր ու ժամանակակիցների խղճի, ու բոլոր այն ազնիւ մարդկանց նկատմամբ, ովքեր կանգնել են ի պաշտպանութիւն հայութեան, սրբազան մի պարտք ունենք՝ հաւաքել բոլոր ականատեսների ու իրադարձութիւնների մասնակիցների վկայութիւնները, բոլոր նրանց, ովքեր այսպէս թէ այնպէս առընչուել են դրանց:

Ղեկավարուելով հէնց այս մղումներով, ուզում ենք Հիւսիսային Արցախի ազատագրութեան համար մղած մարտերից մէկում զոհուած մի Ֆիդայու մասին պատմել:

«Արտասովոր ու զարմանահրաշ մարդիկ այնուամենայնիւ կան մեր մէջ». ահա այս միտքն էր, որ անընդհատ պտտւում էր բիւրեղաւանցի Սամուէլ Վարդանեանի թաղման ժամանակ: Այդ մարդը ապրում էր, աշխատում, պահում իր բազմանդամ ընտանիքը, ի վերջոյ, պարզապէս գոյութիւն ունէր՝ մինչեւ 1988թ. Փետրուարի 20ը:

Բայց ահա զարկեց Ղարաբաղեան կոչնակը: 1988թ. Փետրուարի 22ին նա ասաց հարազատներին ու ընկերներին, որ գնում էր Արցախ, որ իր տեղն այնտեղ է: Իր բարեկամների ու մի քանի ընկերոջ հետ միասին Սամուէլը կոոպերատիւ է կազմակերպում եւ գնում... գիւղ: Ո՛չ նա, ո՛չ էլ նրա ընկերակիցներից մէկը երբեւիցէ չէին եղել Ղարաբաղում, սակայն Սամուէլը դարձաւ Արցախի քաղաքացիներից մէկը, մերուեց նրա բազմաչարչար հողին:

Որքան հոգեկան կորով, որպիսի՛ բարոյական զօրութիւն կար այդ մարդու մէջ, որ Արցախի զանազան գիւղերի բնակիչներից հետզհետէ մի ջոկատ կազմեց: Նրան հաւատում էին, մարդիկ մարտնչում էին, զոհւում, ազատագրում, վրէժ լուծում՝ յանուն անարգուած մեր պատւի, յանուն մեր խոցոտուած հողի, յանուն տանջահար ժողովրդի: Նրան ոչ թէ ենթարկւում էին, այլ՝ հաւատում, հպարտանում նրանով: Սամուէլին ղեկավարում էր մեր նախնիներից ժառանգած մի ինչ-որ բնազդային սկզբունք: Թերեւս, այնուամենայնիւ, դա ոչ թէ ջոկատ էր, այլ՝ «ընտանիք», որի փոխյարաբերութիւնները արեամբ էին ամրապնդում: Եւ քանզի դա ընտանիք էր, ապա Սամուէլն էլ, ասես, դրա հայրը լինէր, որը միշտ քայլում էր առջեւից, որպէսզի սատար լինի իր հարազատներին: Նա միշտ այնտեղ էր, որտեղ խիստ վտանգաւոր էր, որտեղ հաւանական ելքերից մէկը մահն էր: Նա թոյլ չէր տալիս, մտքով անգամ չէր անցկացնում, որ ինքը պահպանութեան կարիք ունի. այս առումով նա շարքային էր՝ շարքային, ով քայլում է առջեւից, շարքային, ում գնդացրի կրակահերթը առաջինն է խոցում:

Եւ իրօք, այդպէս էլ եղաւ, գնդացրի կրակահերթը խոցեց նրան ա՛յն պահին, երբ նա ազատագրում էր Յունիսի վերջերին խլուած Հիւսիսային Արցախի մեր պապենական հողերը: Զրահաշապիկ չունէր հագին, որովհետեւ ջոկատում միայն մէկ զրահաշապիկ կար, եւ այդ պատճառով էլ ոչ ոք չէր հագնում այն:

Եւ ահա, մահացու վիրաւոր զինուոր-հրամանատարին դուրս են բերում կրակի տակից: Դուրս են բերում նշանակէտային, խիտ կրակի տակից, քար ու մացառի միջով: Սակայն, տանում էին, տանում էին ինչ-որ իմաստով նրա արարած մարտիկները, տանում էին՝ շենթարկուելով նրա հրամանին: Իսկ հրամանի իմաստն այն էր, որ իրեն մի նռնակ տան ու թողնեն այդտեղ, որ մօտեցած ազերիների հետ միասին պայթեցնի ինքն իրեն: Տանում էին, քանզի չէին կարող շտանել, քանզի հրամանատարը մէկ անգամ չէ, որ տարել էր ուրիշներին: Այս անգամ հերթը զինուորներինն էր: Եւ նրանք տանում էին նրան՝ չխնայելով ոչինչ: Երկուսը յափտեան մնացին մարտի դաշտում, իսկ երկուսն էլ, վիրաւոր ու արիւնաքամ, դուրս բերեցին իրենց հրամանատարին:

Մարդ պիտի լսէ՛ր, տեսնէ՛ր, թէ ինչ ահաւոր, պարզապէս ֆիզիկական ցաւ ու տառապանք կար այդ պահերի մասին պատմող մարտիկների աչքերում: Շատերն էին կարծում, որ նա մի ինչ-որ կախարդանքով անխոցելի է թշնամու գնդակի համար, սակայն, բոլորն էլ խոստովանում էին, որ նրա մահը պատահական չէր: Չափազանց յաճախ, չափազանց բացայայտ, ու չափազանց շատ էր նա վտանգի ենթարկում իրեն. վտանգի ենթարկուելը նրա կեցութեան ձեւն էր դարձել եւ սրանք լոկ խօսքեր չեն: Եւ արդէն զարմանալի չէ, որ Սամուէլի տիկինը նոյնպէս Արցախ էր տեղափոխուել, ամենուրեք նրա հետ էր եւ մշտապէս կիսում էր նրա հոգսերն ու չարչարանքները:

Սամուէլ Վարդանեանը հեռացաւ մեզանից, բայց անունը մնաց: Անունը մնաց Բիւրեղաւանի միջնակարգ դպրոցին: Ջոկատը չբարոյալքուեց ու չցրուեց, այլ աւելի ամրապնդուեց, նոր «ժողովրդային վրիժառուներ»ական, եւ հիմա ջոկատն էլ է նրա անունը կրում:

ԵՈՒՐԻ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ